

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 7, 2010.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF HIRSHHORN V. ROMANIA - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

ՀԻՐՇՀՈՐՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

2007թ. հունիսի 26-ի վճիռը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

4. Դիմողը ծնվել է 1925 թվականին Բուխարեստում և ապրում է Լե Կանեում (Ֆրանսիա):

5. 1952 թվականին, ազգայնացման վերաբերյալ թիվ 92/1950 որոշման հիման վրա, Պետությունն ի սեփականություն է վերցրել Բուխարեստի Նեգուստորի 16 հասցեում գտնվող շենքը, որը պատկանել է դիմողի ծնողներին՝ հուդայականություն դավանող Ռումինիայի քաղաքացիներին:

A. Տիրապետումը վերականգնելու վերաբերյալ հայցը

6. 1998 թվականի սեպտեմբերի 18-ին դիմողը գույքի նկատմամբ տիրապետման իրավունքը վերականգնելու վերաբերյալ հայց է ներկայացրել Բուխարեստի շրջանային դատարան: Հայցը ներկայացված է եղել Բուխարեստի տեղական խորհրդի՝ Վարձակալական սեփականության կառավարման դեպարտամենտի (*Departamentul de administrare a fondului locativ*) և Տիտան պետական ընկերության դեմ, որը կառավարել է այդ սեփականությունը: Նա փաստարկել է, որ թիվ 92/1950 որոշման համաձայն՝ որոշակի սոցիալական խմբերի սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ բացառվում է ազգայնացումը և որ իր ծնողները նման խմբերից մեկին են պատկանել:

7. 1999 թվականի հունիսի 24-ի վճռով դատարանը հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ Պետությունը գույքն ի սեփականություն է վերցրել առանց որևէ իրավական հիմքի: Այն պատասխանողներին կարգադրել է դիմողին վերադարձնել շենքը և հարակից հողատարածքը:

8. Տեղական խորհրդի անունից Բուխարեստի քաղաքապետի գրասենյակի կողմից ներկայացված բողոքի քննության արդյունքում Բուխարեստի մարզային դատա-

րանն անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի 1999 թվականի դեկտեմբերի 6-ի վճռում առկա որոշումը:

9. Քաղաքապետի գրասենյակը վերաքննիչ բողոք է ներկայացրել Բուխարեստի վերաքննիչ դատարան, որը 2000 թվականի հունիսի 21-ի վերջնական վճռով բողոքը չպատճառաբանված լինելու հիմքով անընդունելի է ճանաչել:

10. 2000 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ Բուխարեստի քաղաքապետը կարգադրել է շենքը վերադարձնել դիմողին:

B. Տիրապետումն ստանձնելու` դիմողի փորձերը

1. Վարձակալությունը դադարեցնելու վերաբերյալ հայցը

11. 2000 թվականի նոյեմբերի 9-ին դիմողը դատական կատարածուի հետ մեկտեղ գնացել է այդ շենք` ցանկանալով դրա տիրապետումն ստանձնել, սակայն հայտնաբերել է, որ այն զբաղեցված է Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի կողմից, քանի որ վերջինս Ռումինիայում դեսպանական ներկայացուցչություններին տրամադրվող շենքերի կառավարումն իրականացնող` Լոկատո պետական ընկերության հետ կնքել է վարձակալության պայմանագիր:

12. 2001 թվականի նոյեմբերի 14-ին դիմողը Լոկատոյի և Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի դեմ հայց է ներկայացրել` պահանջելով դադարեցնել վարձակալությունը և կարգադրել խաղաղության կորպուսին ազատել շենքը:

13. 2001 թվականի մայիսի 30-ի վճռով Բուխարեստի շրջանային դատարանը մերժել է հայցը: Այն արձանագրել է, որ 1992 թվականին կառավարության որոշմամբ շենքի նկատմամբ սեփականության իրավունքը Բուխարեստի քաղաքապետի գրասենյակը փոխանցել է Ռումինիայում դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից օգտագործվող շենքերը կառավարող ընկերությանը: Այդ ընկերությունը նշված շենքը Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսին վարձակալական հիմունքներով տրամադրել է 1993 թվականից սկսած: Վերջին վարձակալության պայմանագիրը, որը կնքվել է 1999 թվականի հունվարի 12-ին և որով սահմանված վարձավճարը կազմել է ամսական 4.907 ԱՄՆ դոլար (USD), պետք է ավարտվեր 2002 թվականի մարտի 31-ին: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Լոկատոն ունեցել է շենքը կառավարելու պատշաճ իրավասություն, դատարանը գտել է, որ վիճարկվող վարձակալությունը եղել է օրինական:

14. 2001 թվականի նոյեմբերի 5-ի վճռով Բուխարեստի մարզային դատարանը պրն Հիրշհորնի բողոքի հիման վրա վերացրել է վիճարկվող որոշումը և դիմողի գործողությունը թույլատրելի է ճանաչել: Սարգային դատարանն արձանագրել է, որ Բուխարեստի շրջանային դատարանն իր` 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճռում գտել է, որ Պետությունը շենքը յուրացրել է առանց օրինական հիմքի: Հաշվի առնելով, որ Պետությունը չի կարող տնօրինել իրեն չպատկանող որևէ գույք, դատարանը վերացրել է վարձակալությունը և կարգադրել է վտարել վարձակալ կազմակերպությանը: Օրենքով սահմանված կարգով Լոկատոն բողոք է ներկայացրել:

15. 2001 թվականի դեկտեմբերի 21-ին դատական կատարածուն Շրջանային դատարանի կողմից լիազորվել է վտարել վարձակալ կազմակերպությանը` հիմք ընդունելով 2001 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը: 2002 թվականի հունվարի 31-ին նա կարգադրել է Լոկատոյին կատարել որոշումը:

16. 2002 թվականի փետրվարի 6-ի նամակով Լոկատոն տեղեկացրել է դատական կատարածուին, որ շենքը հանդիսանում է Պետության սեփականությունը և որ վարձակալ կազմակերպությունն օժտված է դիվանագիտական իմունիտետով: Ուստի այն գտել է, որ վտարման վերաբերյալ կարգադրության իրականացումը ոչ տեղին կլինի և կարող է միջազգային մակարդակում վնասել Ռումինիայի վարկանիշը:

17. 2002 թվականի փետրվարի 11-ին և 20-ին դատական կատարածուն այցելել է շենք, սակայն Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի ներկայացուցիչը նրան արգելել է մուտք գործել` այն հիմքով, որ խաղաղության կորպուսը Միացյալ

Նահանգների կառավարական կազմակերպություն է, որը դիվանագիտական ինունհետ տես ունի և, հետևաբար, չի կարող վտարվել:

18. 2002 թվականի փետրվարի 25-ին դատական կատարածուն Բուխարեստի վերաքննիչ դատարանի նախագահին նամակ է գրել՝ տեղեկացնելով նրան 1999 թվականի հունիսի 24-ի վճռի և Բուխարեստի քաղաքապետի որոշման կատարման հետ կապված դժվարությունների մասին, քանի որ Լոկատոն և Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսը վկայակոչում են դիվանագիտական անձեռնմխելիությունը: Նամակում առկա է հետևյալ պարբերությունը.

«Ելնելով նման իրավիճակներում միջազգային իրավունքի որոշ կոնվենցիաների կիրառելիությունից՝ մենք շնորհակալ կլինենք, եթե դուք քննարկեք և համապատասխանաբար նաև մեզ տեղեկացնեք հատուկ կատարողական միջոցների ձեռնարկման հնարավորության մասին և, հաշվի առնելով այն փաստը, որ կատարողական թերթը ենթադրվում է, որ ուժի մեջ է մտել և որ Բուխարեստի մարզային դատարանի 2001 թվականի նոյեմբերի 5-ի վճռի դեմ Լոկատոյի բողոքը գտնվում է ձեր դատարանում և նիստը նշանակված է 2002 թվականի փետրվարի 26-ին»:

19. 2002 թվականի մարտի 4-ին Բուխարեստի վերաքննիչ դատարանի նախագահը պատասխանել է դատական կատարածուի նամակին և տեղեկացրել նրան, որ նրան անհանգստացնող հարցերն ուսումնասիրվել են հսկող դատավորի (inspecting judge) կողմից, ում զեկույցն ինքն ուղարկում է դատական կատարածուին: Ձեկույցում նշվել էր, որ 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի համաձայն՝ դիվանագիտական ներկայացուցչությունների սեփականությունն անձեռնմխելի է: Քանի որ դատական ինունհետ տարածվում է կատարողական վարույթների վրա, ապա հսկող դատավորը եզրակացնում է, որ դիմողը չի կարող իր շենքի տիրապետումը վերականգնել, և խնդրել է դատական կատարածուին խորհուրդ տալ նրան շենքի արժեքին համապատասխան փոխհատուցման պահանջ ներկայացնել այն հիմքով, որ 1999 թվականի հունիսի 24-ի վճիռը հնարավոր չէ կատարել:

20. Միաժամանակ, 2002 թվականի փետրվարի 20-ին դիմողը, ով ապրում էր Ֆրանսիայում, Վերաքննիչ դատարանի գրասենյակ ֆաքս է ուղարկել՝ նշելով, որ ինքը հրաժարվել է իր փաստաբանի ծառայություններից և խնդրում է հետաձգել փետրվարի 26-ին նշանակված նիստը, որպեսզի ինքը կարողանա կարգավորել փոփոխությունը:

21. Փետրվարի 26-ի նիստում Վերաքննիչ դատարանը մերժել է հետաձգման վերաբերյալ պահանջը՝ հիմք ընդունելով այն, որ դիմողը բավարար ժամանակ է ունեցել նոր փաստաբան նշանակելու համար: Սակայն այն հետաձգել է վճռի կայացումը նախ՝ մինչև 2002 թվականի մարտի 5-ը, ապա՝ մինչև մարտի 12-ը, որպեսզի դիմողին հնարավորություն ընձեռի իր եզրակացությունները գրավոր ներկայացնել:

22. 2002 թվականի մարտի 12-ին կայացված վերջնական վճռում Բուխարեստի վերաքննիչ դատարանի քաղաքացիական բաժինը երեք դատավորի կազմով բավարարել է Լոկատոյի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքը և մերժել է դիմողի հայցը: Այն հաստատել է վարձակալության օրինականությունը՝ գտնելով, որ այն պահանջվածի պես բարեխիղճ է կնքվել, թեև ընկերությունը, փաստորեն, վարձակալության պայմանագրի ստորագրման ժամանակ չի հանդիսացել քննարկվող շենքի սեփականատեր:

23. 2002 թվականի մարտի 21-ին Բուխարեստի շրջանային դատարանը մերժել է դիմողի՝ դատական կատարածուի դեմ ներկայացված հայցը, որի համաձայն վերջինս որևէ գործողություն չի կատարել՝ ուղղված 1999 թվականի հունիսի 24-ի վճռի կատարմանը: Դատարանը գտել է, որ դատական կատարածուն եղել է շենքի մոտ, սակայն տեղեկացվել է, որ Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսն օգտվում է դատական ինունհետ տեղից: Հետևաբար, դատարանը գտել է, որ չի կարելի ասել, որ դատական կատարածուն չի կատարել քննարկվող վճիռը:

2. Թիվ 10/2001 օրենքի հիման վրա ներկայացված ռեստիտուցիայի վերաբերյալ հայցը

24. 1945 թվականի մարտի 6-ից 1989 թվականի դեկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում Պետության կողմից սխալմամբ ազգայնացված անշարժ գույքի կառավարման կանոնները սահմանող թիվ 10/2001 օրենքի («օրենք թիվ 10/2001») հիման վրա 2001 թվականի օգոստոսի 9-ին դիմողը պահանջել է, որպեսզի Լոկատոն իրեն վերադարձնի գույքը: Նրա պահանջը 2001 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ մերժվել է:

25. Դիմողն այդ որոշումը բողոքարկել է Բուխարեստի մարզային դատարան և պահանջել է Լոկատոյին վտարել այդ շենքից: Նա փաստարկել է, որ շենքը 1999 թվականի հունիսի 24-ի վճռի ուժով պատկանում է իրեն:

26. 2002 թվականի մայիսի 13-ի վճռով Մարզային դատարանը բավարարել է շենքի ռեստիտուցիայի վերաբերյալ հայցը, սակայն մերժել է վտարման պահանջն այն հիմքով, որ Խաղաղության կորպուսը դատավարության կողմ չէ: Լոկատոն օրենքով սահմանված կարգով բողոք է ներկայացրել:

27. Կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի որոշմամբ (թիվ 533) Լոկատոն դարձել է Պետության դիվանագիտական գույքի կառավարման գործակալություն (*Regia autonoma Administratia patrimoniului protocolului de Stat* – «Գործակալություն»): Դիմողի գույքը շարունակել է գտնվել այդ որոշմանը կցված ցանկում՝ որպես Պետության գույք, որը կառավարվում է Գործակալության կողմից:

28. 2004 թվականի մարտի 31-ի վճռով Բուխարեստի վերաքննիչ դատարանը բավարարել է բողոքը և մերժել դիմողի հայցն այն հիմքով, որ պրն Չիրչիորնը ապացույցներ չի ներկայացրել ո՛չ առ այն, որ շենքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար նրան է փոխանցվել իր ծնողներից, ո՛չ առ այն, որ նրան փոխհատուցում չի տրամադրվել, չնայած որ 1959 թվականին Ֆրանսիայի և Ռումինիայի միջև Ֆրանսիայի քաղաքացիներին սեփականության իրավունքով պաշտոնապես պատկանող և Ռումինիայի պետության կողմից ազգայնացված գույքի վերաբերյալ համաձայնություն է կնքվել:

29. Դիմողի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքը դեռևս գտնվում է Վճռաբեկության և արդարադատության բարձր դատարանի վարույթում:

3. Տիրապետումը վերականգնելու վերաբերյալ երկրորդ հայցը

30. 2002 թվականի օգոստոսի 15-ին Բուխարեստի մարզային դատարան ներկայացված՝ տիրապետումը վերականգնելու վերաբերյալ հայցով դիմողը պահանջել է Գործակալությունից վերադարձնել շենքը, դադարեցնել Խաղաղության կորպուսի հետ կնքված վարձակալության պայմանագիրը և վտարել վերջինիս, ինչպես նաև իրեն վճարել Գործակալության ստացած վարձավճարը:

31. 2003 թվականի փետրվարի 17-ի վճռով Մարզային դատարանը հայցն անընդունելի է ճանաչել այն հիմքով, որ դիմողը չի կարող ընդհանուր կարգով հայց ներկայացնել, քանի որ թիվ 10/2001 օրենքի հիման վրա ներկայացված հայցը դեռևս քննվում է:

32. Դիմողը բողոք է ներկայացրել Բուխարեստի վերաքննիչ դատարան, որը 2003 թվականի հոկտեմբերի 29-ին վճիռ է կայացրել: Ապա դիմողն օրենքով սահմանված կարգով բողոք է ներկայացրել Վճռաբեկության և արդարադատության բարձր դատարան: Վերջինս 2005 թվականի հունիսի 7-ի վճռով բավարարել է հայցը և գործը վերադարձրել Բուխարեստի վերաքննիչ դատարան: Վարույթը դեռևս շարունակվում է:

C. Շենքի ներկա վիճակը

33. Գործակալությունը վերակազմավորվել է Կառավարության 2005 թվականի հունվարի 21-ի թիվ 60 որոշմամբ: Դիմողի շենքը դեռևս գտնվում է Գործակալության կողմից կառավարվող՝ Պետությանը պատկանող գույքի ցանկում:

34. Թեև Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի հետ կնքված վարձակալության պայմանագրի ժամկետը լրանում է 2002 թվականի մարտի 31-ին, սակայն այդ կազմակերպությունը շարունակում է զբաղեցնել շենքը: Կառավարությունը չի ներկայացրել զբաղեցման հանգամանքի իրավական հիմքերի հետ կապված մանրամասներ:

35. Դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը վկայում են, որ նա վճարել է այդ շենքի հետ կապված բոլոր հարկերը և կատարել է բոլոր պարտականությունները: Սակայն 2004 և 2005 թվականներին Գործակալությունը ևս տեղական բյուջե է վճարել շենքի հետ կապված հարկերը և կատարել պարտականությունները:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

A. Ներպետական օրենսդրությունը

36. Տվյալ ժամանակահատվածում գործող՝ Արդարադատության իրականացման մասին օրենքի (օրենք թիվ 92/1992) համաձայն՝ վերաքննիչ դատարանի նախագահին իրականացնում է հիմնական վարչական, կազմակերպական և վերահսկողական պարտականություններ: Օրենքի համապատասխան դրույթների համաձայն.

Հոդված 15

«[Վերաքննիչ դատարանի] նախագահը և, անհրաժեշտության դեպքում, [այդ դատարանի] բաժինների նախագահները պետք է որոշեն դատարանի կազմը...»:

Հոդված 16

«Եթե նախագահը, նախագահի տեղակալը կամ բաժնի նախագահը հանդիսանում են դատարանի կազմի անդամ, ապա նա պետք է նախագահի այն: Բոլոր այլ դեպքերում նախագահը կամ բաժնի նախագահը պետք է նշանակի դատարանի կազմը նախագահողին»:

Հոդված 18

«Արդարադատության նախարարը պետք է պատասխանատու լինի արդարադատության համակարգի՝ որպես պետական ծառայության տեսակի, պատշաճ կազմակերպման և գործունեության համար: Վերաքննիչ դատարանների հսկող դատավորները պետք է արդարադատության նախարարին տեղյակ պահեն դատարանների գործառնության, ինչպես նաև կանոնների խախտման ցանկացած դեպքի մասին, որոնք կարող են վարկաբեկել դատական գործունեության չափանիշը և օրենքների ու կարգավորումների կիրառությունը, որոնք գտնվում են վերաքննիչ դատարանների իրավազորության ներքո:

Դատարանների նախագահները և նախագահների տեղակալները պետք է վերահսկեն ծառայության կազմակերպումը և որակը, ինչպես նաև դրա համապատասխանությունն օրենքներին և կարգավորումներին... Վերաքննիչ դատարանների նախագահները կարող են այս բացառիկ իրավունքն իրացնել վերաքննիչ դատարանի հսկող դատավորների միջնորդների միջոցով:

Որևէ դեպքում վերահսկողական գործունեության իրականացումը չի կարող հանգեցնել իրականացվող վարույթին միջամտության կամ կասկածի տակ դնել արդեն կայացված որոշումը...»:

Հոդված 66

«Դատավորների առաջխաղացումը պետք է իրականացվի նրանց արժանիքների հիման վրա, ինչպես որ դա հաստատվել է նրանց վերադասների գնահատականներով: Գնահատականները պետք է տրվեն ամեն տարի և պետք է արտացոլեն տվյալ անձանց կողմից իրենց պարտականությունների կատարումը, նրանց վարքագիծն աշխատանքի և հասարակական վայրերում, նրանց մասնագիտական որակները և նրանց աշխատանքային հեռանկարները»:

Հոդված 115

«Դատավորներին պետք է արգելվի ընթացիկ գործերի վերաբերյալ գրավոր կամ բանավոր կերպով խորհուրդներ տալ, եթե անգամ քննարկվող գործը լսվում է ոչ թե իրենց, այլ ուրիշ դատարանի կողմից: Նրանք չեն կարող ընթացիկ գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք արտահայտել»:

Հոդված 121

«Դատավորները պետք է կարգապահական պատասխանատվության ենթարկվեն, եթե իրենց պարտականությունների կատարման ընթացքում թույլ են տվել կանոնների խախտում կամ դրսևորել են այնպիսի վարքագիծ, որի արդյունքում վնաս է պատճառվել ծառայության շահերին կամ արդարադատության համակարգի հեղինակությանը»:

Հոդված 124

«Կարգապահական վարույթը ... պետք է հարուցվի արդարադատության նախարարի կողմից...»:

Հոդված 125

«Կարգապահական վարույթ հարուցելու նպատակով..., արդարադատության նախարարի կողմից պետք է պարտադիր կարգադրվի նախնական քննություն իրականացնել:

Քննությունը պետք է իրականացվի կամ գոնե այն դատավորին հավասար դասի դատավորների կողմից, ում նկատմամբ քննություն է իրականացվում, կամ ընդհանուր հսկողների կամ նախարարության այլ պաշտոնատար անձանց կողմից, ովքեր հավասարեցված են դատավորներին»:

Հոդված 126

«Ստանալով նախնական քննության տվյալները՝ Նախարարը կարող է գործն ուղարկել Դատական համակարգի գերագույն խորհուրդ:

Գերագույն խորհուրդը պետք է պատճառաբանված որոշում կայացնի...»:

37. Վերաքննիչ դատարանում հսկող դատավորի կարգավիճակը վերացվել է 2005 թվականի հուլիսի 19-ի թիվ 247 օրենքով: Սակայն վերաքննիչ դատարանի նախագահի և նախագահի տեղակալների՝ հսկողություն իրականացնող դատավորների նշանակման հետ կապված իրավասությունը պահպանվել է: Այնուամենայնիվ, այս հսկողությունները պետք է իրականացվեն դատավորների անկախության պահպանմամբ և պետք է համապատասխանեն դատարանի վերջնական որոշումներին:

38. Թիվ 92/1992 օրենքի 66-րդ հոդվածը վերացվել է Դատավորների կարգավիճակի մասին օրենքով (օրենք թիվ 303/2004), որն ամրագրում է, որ դատավորների գործունեությունը Դատական համակարգի գերագույն խորհրդի իրավասության տակ գործող կոմիտեի կողմից պետք է երեք տարին մեկ անգամ գնահատվի:

39. Վերաքննիչ դատարանների կազմերի ձևավորման մեթոդը փոփոխվել է Արդարադատության իրականացման մասին օրենքով (օրենք թիվ 304/2004), որը սահմանում է, որ կազմերի ձևավորումը պետք է իրականացվի յուրաքանչյուր վերաքննիչ դատարանի ներսում գործող հանձնաժողովի կողմից, որը կազմված է նախագահից և դատավորների ընդհանուր ասամբլեայի կողմից ընտրված վեց անդամներից:

40. Դատական համակարգի գերագույն խորհրդի վերաբերյալ թիվ 317/2004 օրենքի համաձայն՝ կարգապահական վարույթները Գերագույն խորհրդի կազմում գործող կարգապահական կոմիտեի բացառիկ իրավասությունն են հանդիսանում, և շահագրգիռ կողմը կարող է դիմել վերջինիս:

B. Միջազգային օրենսդրությունը

41. Համապատասխան միջազգային դրույթները հետևյալն են.

1. *Դիվանագիտական կապերի մասին Վիեննայի 1961 թվականի ապրիլի 18-ի կոնվենցիան (Ռուսիայի կողմից վավերացվել է թիվ 566/1968 որոշման միջոցով, հրատարակվել է «Official Journal»-ում 1968 թվականի հուլիսի 8-ին)*

Հոդված 1

«Սույն Կոնվենցիայում ստորև բերվող դարձվածքներն ունեն հետևյալ նշանակությունը.

...

(i) «Ներկայացուցչության շենքեր» նշանակում են ներկայացուցչության նպատակների համար օգտագործվող շենքերը կամ շենքերի մասերը, ներառյալ ներկայացուցչության ղեկավարի նստավայրը, անկախ նրանից, թե ում է պատկանում դրանց սեփականության իրավունքը, ներառյալ տվյալ շենքը կամ շենքի մի մասը սպասարկող հողամասը»:

Հոդված 3

«1. Դիվանագիտական ներկայացուցչության գործառույթները մասնավորապես կայանում են հետևյալում.

- a) հավատարմագրող պետությունը ներկայացնել նստավայր պետությունում.
- b) պաշտպանել հավատարմագրող պետության և նրա քաղաքացիների շահերը նստավայր պետությունում՝ միջազգային իրավունքով թույլատրելի շրջանակներում.
- c) բանակցություններ վարել նստավայր պետության կառավարության հետ.
- d) բոլոր օրինական միջոցներով պարզել նստավայր պետությունում առկա պայմաններն ու իրադարձությունները և դրանց մասին հաղորդել հավատարմագրող պետության կառավարությանը.
- e) խրախուսել բարեկամական հարաբերությունները հավատարմագրող պետության և նստավայր պետության միջև և զարգացնել նրանց փոխհարաբերությունները էկոնոմիկայի, մշակույթի և գիտության բնագավառում:

...»:

Հոդված 22

«1. Ներկայացուցչության շենքերն անձեռնմխելի են: Նստավայր պետության իշխանությունները չեն կարող մուտք գործել այդ շենքեր այլ կերպ, քան ներկայացուցչության ղեկավարի համաձայնությամբ:

2. Նստավայր պետության վրա հատուկ պարտականություն է դրվում բոլոր պատշաճ միջոցները ձեռնարկել ներկայացուցչության շենքերն ամեն տեսակ ներխուժումներից կամ վնաս հասցնելուց պաշտպանելու և ներկայացուցչության անդորրի ամեն տեսակ խախտումը կամ արժանապատվությունը վիրավորելը կանխելու համար:

3. Ներկայացուցչության շենքերը, կահավորանքի առարկաները և այնտեղ գտնվող մյուս գույքը, ինչպես նաև ներկայացուցչության փոխադրամիջոցներն օգտվում են խուզարկման, բռնագրավման, կալանքի և գործադրման ենթակա գործողությունների իմունիտետից»:

2. *Պետության իմունիտետի վերաբերյալ եվրոպական կոնվենցիան (Բասլ, 1972 թվականի մայիսի 16) (չի ստորագրվել Ռուսիայի կողմից)*

Հոդված 9

«Պայմանավորվող պետությունը չի կարող վկայակոչել այլ Պայմանավորվող պետության դատարանի իրավագործությունից ունեցած իր իմունիտետը, եթե վարույթը կապված է.

- a. անշարժ գույքի նկատմամբ դրա իրավունքների կամ շահերի կամ օգտագործման կամ տիրապետման հետ, կամ
- b. անշարժ գույքի նկատմամբ դրա իրավունքներից կամ շահերից կամ օգտագործումից կամ տիրապետումից բխող դրա պարտականությունների հետ, և եթե գույքը գտնվում է դատարանի Պետության տարածքում»:

Հոդված 23

«Պայմանավորվող պետության գույքի նկատմամբ որևէ կատարողական կամ կանխարգելիչ միջոցառումներ չեն կարող իրականացվել այլ Պայմանավորվող պետության տարածքում, բացառությամբ այն դեպքերի, երբ Պետությունը կոնկրետ գործով ուղղակիորեն, գրավոր կերպով համաձայնել է դրան»:

- 3. Պետությունների և դրանց սեփականության իրավագորային (յուրիսդիկցիոն) իմունիտետի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան, 2004 թվականի դեկտեմբեր (Ռունինիայի կողմից վավերացվել է 2007 թվականի փետրվարի 15-ին, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել)

42. Նշված կոնվենցիայի համապատասխան դրույթներն ամրագրում են հետևյալով.

Հոդված 2 – Կիրառվող հասկացությունները

«1. Սույն կոնվենցիայի նպատակներով.

...

(b) «Պետություն» նշանակում է.

(i) Պետությունը և դրա տարբեր կառավարական մարմինները,

...

(iii) Պետության կամ այլ կազմավորումների գործակալությունները կամ օժանդակ մարմինները, այնքանով, որքանով դրանք իրավասու են իրականացնել և փաստորեն իրականացնում են Պետության ինքնիշխանության իրականացմանն ուղղված գործողություններ,

...»:

Հոդված 5 – Պետության իմունիտետը

«Պետությունն իր և իր սեփականության առնչությամբ ունի իմունիտետ այլ Պետությունների դատարանների իրավասությունից, որոնց վրա տարածվում են սույն կոնվենցիայի դրույթները»:

Հոդված 6 – Պետության իմունիտետի իրականացման ձևերը

«1. Պետությունը պետք է իրականացնի 5-րդ հոդվածով նախատեսված՝ Պետության իմունիտետը՝ ձեռնպահ մնալով այլ Պետության դեմ իր դատարաններում իրականացվող վարույթով իրավագորություն իրականացնելուց և այդ նպատակով պետք է ապահովի, որպեսզի իր դատարանները սեփական նախաձեռնությամբ սահմանեն, որ 5-րդ հոդվածով նախատեսված՝ այդ այլ Պետության իմունիտետն ապահովված է:

2. Պետության դատարանում իրականացվող վարույթը պետք է դիտվի որպես այլ Պետության դեմ հարուցված, եթե այդ այլ Պետությունը.

(a) այդ վարույթում հանդես է գալիս որպես կողմ, կամ

(b) այդ վարույթում հանդես չի գալիս որպես կողմ, սակայն վարույթն արդյունքում նպատակ ունի ազդել այդ մյուս Պետության սեփականության, իրավունքների, շահերի կամ գործունեության վրա»:

Հոդված 13 – Գույքի տնօրինումը, տիրապետումը և օգտագործումը

«Եթե մասնակից Պետություններն այլ համաձայնության չեն եկել, Պետությունը չի կարող վկայակոչել այլ պետության դատարանի իրավագորությունից ունեցած իմունիտետը, եթե վերջինս այլ հանգամանքներում իրավասու է վարույթ իրականացնել՝ կապված հետևյալ հանգամանքների սահմանման հետ.

- (a) Պետության յուրաքանչյուր իրավունք կամ շահ՝ կապված քննարկվող Պետությունում գտնվող անշարժ գույքի կամ դրա տիրապետման կամ օգտագործման հետ, կամ Պետության յուրաքանչյուր պարտականություն, որը ծագում է անշարժ գույքի նկատմամբ ունեցած շահից, կամ դրա տիրապետումից կամ օգտագործումից,
- (b) շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ Պետության իրավունքը կամ շահը, որը ծագում է իրավահաջորդությունից, նվիրատվությունից կամ *bona vacantia*, կամ
- (c) գույքի կառավարման հետ կապված Պետության յուրաքանչյուր իրավունք կամ շահ, ինչպիսին է փոխառության իրավունքով պատկանող գույքը, կամ սնանկ ճանաչված անձի ունեցվածքը կամ ընկերության գույքը, եթե այն լուծարվել է»:

Հոդված 19 – Վճռից բխող հարկադրանքի միջոցների նկատմամբ Պետության ունեցած իմունիտետը

«Վճռից բխող որևէ հարկադրանքի միջոց, ինչպիսին է բռնագրավումը, գույքի վրա կալանք դնելը կամ գույքի վերաբերյալ կատարողական վարույթը, որը կապված է այլ Պետության դատարանում իրականացված վարույթի հետ, չի կարող կատարվել Պետության գույքի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ.

- (a) Պետությունն ուղղակիորեն համաձայնել է նման միջոցների կատարմանը.
 - (i) միջազգային համաձայնության միջոցով,
 - (ii) արբիտրաժային համաձայնության կամ գրավոր պայմանագրի միջոցով, կամ
 - (iii) դատարանում նման հայտարարություն անելով կամ կողմերի միջև վեճի առաջացումից հետո գրավոր դիմում ներկայացնելով, կամ
- (b) Պետությունն այդ գույքն առանձնացրել կամ նախատեսել է այն հայցի բավարարման համար, որի կապակցությամբ սկսվել է այդ վարույթը, կամ
- (c) պարզվել է, որ գույքը Պետության կողմից ուղղակիորեն օգտագործվում կամ նախատեսված է օգտագործման համար ոչ թե կառավարության ոչ առևտրային, այլ ուրիշ նպատակներով և գտնվում է դատարանի Պետության տարածքում...»:

4. Միացյալ Նահանգների և Ռումինիայի կառավարությունների միջև կնքված և 1992 թվականի հունվարի 24-ին Վաշինգտոնում ստորագրված համաձայնությունը, որը վերաբերում է Ռումինիայում Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի ծրագրին

Հոդված IV

«Խաղաղության կորպուսի ներկայացուցիչը և նրա աշխատակազմի անդամների նկատմամբ վերաբերմունքը հավասարեցված է Ռումինիայում Միացյալ Նահանգների դեսպանության համապատասխան դասի աշխատակիցների նկատմամբ վերաբերմունքին, բացառությամբ միայն այն հանգամանքի, որ նրանք չունեն դիվանագիտական կարգավիճակ և իմունիտետ»:

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

43. Դիմողը փաստարկել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կրկնակի խախտման մասին: Առաջին՝ նա նշել է, որ 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճռի չկատարումը խախտել է դատարանի մատչելիության իր իրավունքը, ապա՝ նա փաստարկել է, որ Բուխարեստի վերաքննիչ դատարանի քաղաքացիական բաժինը չի եղել «անկախ ու անաչառ դատարան», քանի որ վերաքննիչ դատարանի նախա-

գահը քննության ընթացքում, դատարանի վարույթում գտնվող գործի ելքն ուղղորդելու նպատակով, նշանակել է հսկիչ դատավոր: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան պարբերության համաձայն.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ..., ունի ... անկախ ու անաչառ դատարանի կողմից ... դատաքննության իրավունք»:

A. 1999 թվականի հունիսի 24-ի վճռի չկատարումը

1. Ընդունելիությունը

44. Դատարանը նշում է, որ սույն գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ - մասի իմաստով ակնհայտ անհիմն է: Ապա այն նշում է, որ այն անընդունելի ճանաչելու այլ հիմքեր չեն արձանագրվել: Յետևաբար, այն պետք է ընդունելի դիտվի:

2. Հանգամանքները

45. Կառավարությունն ի սկզբանե նշել է, որ Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսը հանդիսանում է Միացյալ Նահանգների կառավարական գործակալություն, որն ստեղծվել է 1961 թվականին և գտնվում է Պետքարտուղարի ենթակայության տակ: Այն պետք է դիտվի Ռումինիայում Միացյալ Նահանգների «դիվանագիտական ներկայացուցչություն» և այդ հիմքով օգտվի իմունիտետից: Միջազգային հանրային իրավունքի դրույթների իմաստով, 1999 թվականի հունիսի 24-ի վճռի կատարումը և իր զբաղեցրած շենքից կազմակերպության վտարումն անհնարին է եղել (տե՛ս, *mutatis mutandis, Manoilescu and Dobrescu v. Romania and Russia (dec.)*, թիվ 60861/00, ECHR 2005-VI):

46. Կառավարությունը հավելել է, որ տիրապետման վերականգնման վերաբերյալ երկրորդ հայցի լուծման արդյունքը և թիվ 10/2001 օրենքի հիման վրա հարուցված վարույթը կարող են ազդել քննարկվող շենքի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքի օրինականության վրա:

47. Դիմողը վիճարկել է այս փաստարկները՝ նշելով, որ Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսը չի հանդիսանում Միացյալ Նահանգների կառավարական կազմակերպություն, այն ուղղակի գործակալություն է, որը դիվանագիտական իմունիտետից չի օգտվում:

48. Համենայնդեպս, խաղաղության կորպուսի կողմից վկայակոչված դիվանագիտական իմունիտետը շենքի վերադարձման խոչընդոտ չի հանդիսացել, քանի որ վարձակալության պայմանագրի ժամկետն անցել էր և Ռումինիայի իշխանությունները կարող էին այլ շենքեր տրամադրել կազմակերպությանը:

49. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց ներկայացնել դատարան կամ տրիբունալ (տե՛ս, *Golder v. the United Kingdom*, 1975 թվականի փետրվարի 21, կետեր 28-36, Series A no. 18): Այդ իրավունքը պատրանքային կլինի, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլատրում է վերջնական, պարտականություններ նախատեսող դատական որոշման չկատարում (տե՛ս, *Hornsby v. Greece*, 1997 թվականի մարտի 19, կետ 40, *Reports of Judgments and Decisions* 1997-II):

50. Հանրահայտ է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն ենթադրության հիման վրա, որ դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է Պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս կապակցությամբ, Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կախված է Դատարանից: Անհրաժեշտ է ապացուցել, որ կիրառված սահմանափակումներն անձին վերապահված՝ դիմելու իրավունքն այնպես չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ

վնաս պատճառովի իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանում 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում և եթե կատարված գործողությունների և հետապնդված նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս, *Waite and Kennedy v. Germany* [GC], թիվ 26083/94, կետ 59, ECHR 1999-I):

51. Սույն գործով Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք Ռուսիայի վերջին տարածված վարքագիծը, որի դեմ վիճարկել է դիմողը, վերոնշյալ սկզբունքների իմաստով եղել է հիմնավորված:

52. Դատարանը նշում է, որ թեև վերոնշյալ վճիռն ուժի մեջ է մտել և Բուխարեստի քաղաքապետը 2000 թվականի սեպտեմբերի 25-ին կարգադրել է շենքը վերադարձնել, սակայն վճիռը մնացել է չկատարված շենքը կառավարող ընկերության ներկայացրած առարկությունների պատճառով՝ հիմք ընդունելով Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի ենթադրյալ դիվանագիտական իմունիտետը:

53. Այդ կապակցությամբ Դատարանը գտնում է, որ կողմերը տարբեր տեսակետներ ունեն խաղաղության կորպուսի կարգավիճակի և, համապատասխանաբար, միջազգային իրավունքով Պետության կառավարական մարմիններին տրամադրված արտոնություններից և իմունիտետից վերջինիս օգտվելու իրավունքի վերաբերյալ:

Ապա Դատարանը նշում է, որ քննարկվող կազմակերպության իրավաբանական դեպարտամենտը մերժել է իր կարգավիճակի և գործառույթների մասին Դատարանին տեղեկություն ներկայացնելու վերաբերյալ պահանջը:

54. Այնուամենայնիվ, սույն գործի առանձնահատուկ հանգամանքները հաշվի առնելով՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում այս հարցի կապակցությամբ որոշում կայացնել:

55. Վերոնշյալ՝ *Manoilescu and Dobrescu* վճռում Դատարանը գտել է, որ քննարկվող գույքը դիմողին վերադարձնելու վերաբերյալ առարկությունները հիմնավորված են եղել այն փաստով, որ Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը շենքերը զբաղեցրել է նախքան 1962 թվականը թվագրված սեփականության վերաբերյալ փաստաթղթի ուժով:

56. Սույն գործով Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսը պարզապես հանդիսացել է վիճարկվող գույքի վարձակալը և 1999 թվականի հունվարի 12-ին կնքված վարձակալության վերջին պայմանագրի ժամկետը լրացել է 2002 թվականի մարտի 31-ին: Ուստի, թեև վարձակալության պայմանագրի առկայությունը հիմնավորել է գույքը դիմողին հասանելի դարձնելու հետ կապված ձգձգումները, սակայն Դատարանը չի կարող ընդունել, որ իշխանությունների կողմից գույքը դիմողի սեփականությանը հանձնելը մերժելը շարունակել է հիմնավորված լինել վարձակալության պայմանագրի դադարումից հետո:

57. Դատարանն այդ կապակցությամբ կրկնում է, որ ի լրումն գույքի տիրապետման (*usus*)՝ սեփականության իրավունքը ենթադրում է նաև գույքը տնօրինելու և դրանից արդյունքներ ստանալու իրավունքը (*abusus* և *fructus*): Սակայն, չնայած որ վերը վկայակոչված վճիռն ուժի մեջ էր մտել և վարձակալության պայմանագրի ժամկետը լրանում էր, դիմողը զրկված էր և շարունակում էր զրկված լինել բոլոր այս տարրերից, քանի որ ներպետական իշխանությունները շարունակել են շենքը դիտել որպես Պետության գույք (տե՛ս վերը՝ կետ 33):

58. Դատարանին չի համոզում նաև Կառավարության այն փաստարկը, որ Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսն իրավագրությունից իմունիտետ է ունեցել, և որ 1999 թվականի հունիսի 24-ի վճիռը, հետևաբար, չէր կարող կատարվել:

59. Ի սկզբանե Դատարանը նշում է, որ այս փաստարկն առաջին անգամ բարձրացվել է Կառավարության փաստարկներում: Բուխարեստի վերաքննիչ դատարանի՝ 2002 թվականի մարտի 12-ի թվագիր վճռով ավարտված վարույթներով ներպետական դատարանները, մերժելով դիմողի հայցերը, իրենց որոշումները հիմնավորել են բացառապես վարձակալության վերաբերյալ քաղաքացիական օրենսդրության մեկ-

նաբանություններով՝ առանց վկայակոչելու Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի ենթադրյալ իմունիտետը:

60. Այնուհետև Դատարանը նշում է, որ եթե անգամ քննարկվող կազմակերպությունն իսկապես նման իմունիտետով օժտված լիներ, ապա դա որևէ կերպ չէր կարող խոչընդոտել վիճարկվող գույքի նկատմամբ սեփականատիրական իրավունքները դիմողին փոխանցելուն: Քանի որ այդ փոխանցումն ինքնին չի հանգեցնում վարձակալի վտարման, ուստի շենքն զբաղեցնելու կապակցությամբ վեճի առկայության դեպքում վերջինս ազատ էր ի պաշտպանություն իրեն փաստարկներ ներկայացնել, այդ թվում՝ իրավագործությունից իմունիտետ ունենալու վերաբերյալ:

61. Ինչ վերաբերում է Կառավարության այն փաստարկներին, որ գույքի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքի օրինականությունը կարող է կախված լինել 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճռի կայացումից հետո ներկայացված հայցերի լուծման արդյունքներից, ապա Դատարանը գտնում է, որ այդ հայցերը պարզապես վկայում են իշխանությունների կողմից վճռի կատարումն ապահովելուն ուղղված դիմողի փորձերի մասին: Հետևաբար, դրանք չեն կարող որևէ կապ ունենալ գույքի նկատմամբ նրա սեփականության իրավունքի օրինականության հետ: Համենայնդեպս, Դատարանն արդեն գտել է, որ չափազանց կլիներ Պետության դեմ կայացված որոշումն ստացած դիմողից պահանջել, որպեսզի նա հետագայում ներպետական իշխանությունների դեմ վարույթ սկսի՝ ապահովելու համար քննարկվող պարտականության կատարումը (տե՛ս, *mutatis mutandis*, *Metaxas v. Greece*, թիվ 8415/02, կետ 19, 2004 թվականի մայիսի 27 և *Roman and Hoge v. Romania* (dec.), թիվ 62959/00, 2004 թվականի օգոստոսի 31):

62. Այս դատողությունները բավարար են Դատարանի համար եզրակացնելու, որ շենքը դիմողին վերադարձնելը կարգադրող վերջնական վճիռը չկատարելով՝ ներպետական իշխանությունները զրկել են նրան դատարանի մատչելիության իրավունքից:

63. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

B. Բուխարեստի վերաքննիչ դատարանի անկախությունն ու անաչառությունը

64. Դիմողը փաստարկել է, որ Բուխարեստի վերաքննիչ դատարանի քաղաքացիական բաժինը, որը քննել է Լոկատոյի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքը, չի կարող Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դիտվել որպես «անկախ ու անաչառ դատարան»: Նա փաստարկել է, որ վերաքննիչ դատարանի նախագահը միջամտել է վարույթին՝ հսկող դատավոր նշանակելու միջոցով, ով հստակորեն հանդես է եկել հօգուտ Լոկատոյի բողոքի:

1. Ընդունելիությունը

65. Դատարանը գտնում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ - մասի իմաստով ակնհայտ անհիմն չէ և որ այն այլ հիմքերով անընդունելի չէ: Հետևաբար, այն պետք է ընդունելի համարվի:

2. Հանգամանքները

66. Կառավարությունը պնդել է, որ վերաքննիչ դատարանի դատավորները բավարարել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անկախության պահանջը: Նրանք վիճարկել են, որ դատավորների նշանակման եղանակը, ինչպես նաև նրանց անփոփոխելիությունն ու նրանց կայուն դիրքորոշումը գործադիրից անկախության բավարար երաշխիքներ են:

67. Ինչ վերաբերում է անաչառության պահանջին, ապա սույն գործով չի ներկայացվել որևէ ապացույց, որը կասկած կառաջացներ Բուխարեստի վերաքննիչ դատարանի դատավորների սուբյեկտիվ անաչառության վերաբերյալ: Այդ դատարանի օբյեկտիվ անաչառության կապակցությամբ Կառավարությունը կարծիք է արտահայտել,

որ Վերաքննիչ դատարանի նախագահի կողմից դատական կատարածուին ուղարկված նամակը չի կարող դիմողի լեզվտիմ անհանգստության առաջացման հիմք դիտվել:

68. Այդ կապակցությամբ Կառավարությունը փաստարկել է, որ քննարկվող նամակը ուղարկվել է դատական կատարածուին և ոչ թե դիմողին, որ հանդիսացել է դատական կատարածուի կողմից բարձրացված հարցերի պատասխան և որ այն իր բնույթով դատական փաստաթուղթ չի հանդիսացել: Ի վերջո, այն նշել է, որ Վերաքննիչ դատարանի նախագահի դերը կապված է եղել վարչական պարտականությունների հետ և որ Լոկատոյի բողոքը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշումը որևէ կերպ հիմնված չի եղել հսկող դատավորի դիրքորոշման վրա: Յետևաբար, նամակը որևէ ազդեցություն չի ունեցել գործի ելքի վրա:

69. Դիմողը պնդել է, որ ինքը Վերաքննիչ դատարանի քաղաքացիական բաժնում չի օգտվել արդար դատաքննության երաշխիքից:

70. Դատարանը վերահաստատում է արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայության կարևորությունը՝ հաստատելու համար, որ դատարանը բավարարում է 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «անկախության» պահանջը (ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, տե՛ս, *Findlay v. the United Kingdom*, 1997 թվականի փետրվարի 25, կետ 73, *Reports* 1997-I):

71. «Անաչառության» պահանջի կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ առկա են դրա երկու տեսակետ. դատարանը պետք է սուբյեկտիվորեն ազատ լինի անձնական նախապաշարմունքներից կամ հակումներից և պետք է նաև օբյեկտիվ տեսակետից անաչառ լինի, այսինքն՝ այն պետք է ապահովի բավարար երաշխիքներ այս կապակցությամբ ցանկացած լեզվտիմ կասկած բացառելու համար: Քարտի վրա դրված է վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում դատարանները պետք է ներշնչեն հասարակությանը և, առաջին հերթին՝ դատավարության կողմերին (տե՛ս, *Daktaras v. Lithuania*, թիվ 42095/98, կետ 32, ECHR 2000-X):

72. Քանի որ անկախության և օբյեկտիվ անաչառության հասկացությունները սերտորեն փոխկապակցված են, Դատարանն այս երկու հարցերը միասին է քննելու (տե՛ս վերը, *mutatis mutandis*, *Findlay*, կետ 73):

73. Սույն գործով Դատարանը գտնում է, որ դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ Վերաքննիչ դատարանի դատավորները հակվածություն կամ անձնական նախապաշարմունք են ցուցաբերել: Յետևաբար, անհրաժեշտ է հաստատել, թե արդյոք Վերաքննիչ դատարանի դատավորների անկախության և օբյեկտիվ անաչառության վերաբերյալ դիմողի արտահայտած կասկածներն օբյեկտիվորեն հիմնավորված են:

74. Այդ կապակցությամբ Դատարանը նշում է, որ հսկող դատավորն իր զեկույցում նշելով, որ դիմողն իրավասու չէ իր գույքի տիրապետումն ստանձել՝ պաշտպանել է պատասխանողների, այն է՝ Լոկատոյի և Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի տեսակետը:

75. Այնուհետև, Դատարանն այն կարծիքի է, որ դատական կատարածուին ուղարկելով հսկող դատավորի զեկույցը, ով գործել է Վերաքննիչ դատարանի նախագահի կարգադրությամբ և նրա ենթակայության տակ՝ Վերաքննիչ դատարանի նախագահը հաստատել է զեկույցում առկա դատողությունները:

76. Ակնհայտ է, որ որևէ նշում չկա այն մասին, որ Վերաքննիչ դատարանի նախագահն ընտրել է Լոկատոյի բողոքը քննող դատարանի կազմի մեջ մտած դատավորներին (գործառույթ, որը, որպես կանոն, պատկանում է այդ դատարանի քաղաքացիական բաժնի նախագահին), կամ որ հսկող դատավորը ներգրավված է եղել դատարանի այդ կազմում (հակառակ ենթադրության մասին տե՛ս վերը՝ *Daktaras*, վերևում, կետ 36 և *Buscemi v. Italy*, թիվ 29569/95, կետ 68, ECHR 1999-VI):

77. Սակայն Դատարանը գտնում է, որ տվյալ ժամանակահատվածում գործող իրավական դրույթների ուժով հսկող դատավորները կարևոր դերակատարություն են ունեցել դատարանների և, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանների, ներքին կա-

ռուցվածքում: Մի կողմից, նրանք արդարադատության նախարարին տեղեկացնում էին դատարանների գործունեության և ցանկացած խնդիրների մասին, որոնք կարող էին վնաս պատճառել դատական գործունեության և օրենքների ու կարգավորումների կիրառման արդյունավետությանը, մյուս կողմից՝ նրանք վերաքննիչ դատարանների նախագահների և նախագահների տեղեկալների հանձնարարությամբ վերահսկում էին ծառայության կազմակերպումն ու որակը և դրա համապատասխանությունն օրենքներին և կարգավորումներին:

78. Հաշվի առնելով հսկող դատավորների իրավասության դատական և վարչական լայն շրջանակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նրանք պատասխանատու էին երկուստեք՝ արդարադատության նախարարի և վերաքննիչ դատարանների նախագահների առջև, հարց է ծագում, թե արդյոք բողոքը քննող դատարանի անդամները չեն հանդիսացել ոչ ցանկալի ազդեցության սուբյեկտ, մասնավորապես, հաշվի առնելով արդարադատության նախարարի՝ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից կազմակերպական և վարչական գործառնությունների իրականացման հանգամանքները:

79. Նման ռիսկի կանխարգելման նպատակով օրենքը թույլ չի տալիս դատավորներին հրապարակայնորեն կարծիք արտահայտել դեռևս չավարտված վարույթների կապակցությամբ, ինչպես նաև հսկող դատավորներին խստորեն արգելում է միջամտել վարույթների իրականացմանը:

80. Դատարանը չի կարող անտեսել այն հանգամանքը, որ հսկող դատավորը խախտել է այս արգելքները, քանի որ Լոկատոյի բողոքի քննության ժամանակ նա արձանագրել է, որ Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսը չի կարող վտարվել, չնայած որ Շրջանային դատարանի վիճարկվող վճռով կարգադրվել է այդ վտարումը:

81. Կառավարության փաստարկն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարել է հսկող դատավորի դատողություններից տարբերվող դատողությունների հիմքով, չի փոխում այս եզրակացությունը, քանի որ հսկող դատավորը և, որոշակի իմաստով նաև Վերաքննիչ դատարանի նախագահը փաստարկել են դիմողի հայցի մերժման օգտին:

82. Համենայնդեպս, Դատարանը կրկնում է, որ դատարանի անաչառության վերաբերյալ ցանկացած լեգիտիմացված կասկած ինքնին բավարար է 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումն արձանագրելու համար (տե՛ս, *mutatis mutandis*, *Sramek v. Austria*, 1984 թվականի հոկտեմբերի 22, կետ 42, Series A no. 84):

83. Գործի հանգամանքների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ դիմողի կասկածները՝ կապված Վերաքննիչ դատարանի անկախության ու անաչառության հետ, կարելի է ասել, օբյեկտիվ են եղել:

84. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

II. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

85. Դիմողը փաստարկել է իր գույքի անարգել տիրապետման իրավունքի խախտումը՝ կապված շենքի ռեստիտուցիան կարգադրող՝ 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճռի կատարումն ապահովելու իր անկարողության հետ: Նա հիմք է ընդունել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր գույքից անարգել օգտվելու իրավունք ունի: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:

Վերոնշյալ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության իրավունքը կիրառել այնպիսի օրենքներ, որոնք այն անհրաժեշտ է համարում սեփականության՝ ընդհանուր շահերին համապատասխան օգտագործման վերահսկո-

ղությունն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

1. Ընդունելիությունը

86. Դատարանը գտնում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ - մասի իմաստով ակնհայտ անհիմն չէ և որ այն այլ հիմքերով անընդունելի չէ: Հետևաբար, այն պետք է ընդունելի համարվի:

2. Հանգամանքները

87. Կառավարությունը փաստարկել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի կարող արձանագրվել: Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսը պետք է դիտվի որպես Ռուսիայում Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցչությանը հավասարեցված կազմակերպություն և քննարկվող շենքը օգտագործվել է վերջինիս կողմից «իր դիվանագիտական ներկայացուցչության նպատակներով»:

88. Հետևաբար, պետական մարմինների իմունիտետի սկզբունքը հանդիսացել է 1999 թվականի հունիսի 24-ի վճռի չկատարման իրավական հիմքը: Վճռի չկատարումը համապատասխանել է ընդհանուր շահի օրինական նպատակին, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների կառավարության հետ լավ կապեր պահպանելուն:

89. Դիմողը վիճարկել է Կառավարության փաստարկը՝ նշելով, որ քննարկվող վճռի չկատարումը հանգեցրել է իր՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի խախտման:

90. Դատարանը գտնում է, որ դիմողին քննարկվող շենքի սեփականատեր ճանաչած և տեղական իշխանությունների կողմից այն դիմողին վերադարձնելը կարգադրած՝ 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճիռը հանգեցրել է Ռուսիայի պետության դեմ դիմում ներկայացնելուն և բավականաչափ հիմնավորված է այդ շենքի՝ որպես Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող «գույք» որակումը:

91. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ նախադեպային իրավունքի համաձայն, որն ըստ էության երաշխավորում է սեփականության իրավունքը, առկա են երեք առանձին կանոններ (տե՛ս, *James and Others v. the United Kingdom*, 1986 թվականի փետրվարի 21, կետ 37, Series A no. 98). առաջին կանոնը, որն ամրագրված է առաջին մասի առաջին նախադասության մեջ, ընդհանուր բնույթ ունի և սահմանում է գույքից անարգել օգտվելու սկզբունքը, երկրորդ կանոնը, որն ամրագրված է առաջին մասի երկրորդ նախադասության մեջ, ներառում է սեփական գույքից զրկելը և կոնկրետ իրավիճակում դրա սուբյեկտներին, երրորդ կանոնը, որն ամրագրված է երկրորդ մասում, ճանաչում է Պայմանավորվող պետությունների իրավասությունը, ի թիվս այլոց, վերահսկելու գույքի օգտագործումն ընդհանուր շահին համապատասխան: Երկրորդ և երրորդ կանոնները վերաբերում են գույքից անարգել օգտվելուն միջամտելու մասնավոր դեպքերին և, հետևաբար, պետք է մեկնաբանվեն առաջին կանոնում սահմանված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (տե՛ս, *Iatridis v. Greece* [GC], թիվ 31107/96, կետ 55, ECHR 1999-II):

92. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմողը ոչ միայն անկարող էր ստանձնել իր շենքի տիրապետումը, այլև զրկված է եղել այն վաճառելու կամ դրանից որևէ օգուտ ստանալու հնարավորությունից, քանի որ 2002 թվականի մայիսի 30-ի և 2005 թվականի հունվարի 21-ի որոշումների ուժով Կառավարությունն այն ներառել էր Պետության սեփականությանը պատկանող գույքի ցանկում:

93. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմողի՝ շենքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի որևէ տարրից օգտվելու ամբողջական անկարողությունը հանգեցրել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասի երկրորդ նախադասության նպատակների համար *de facto* զրկման (հակառակը տե՛ս, *Immobiliare Saffi v. Italy* [GC], թիվ 22774/93, կետ 46, ECHR 1999-V):

94. Այս երկրորդ կանոնի իմաստով գույքը վերցնելը կարող է հիմնավորված լինել, եթե միայն ցույց է տրվում, որ դա իրականացվում է հանրային շահից ելնելով և օրեն-

քով նախատեսված պայմաններով: Բացի դրանից, գույքից օգտվելուն ուղղված ցանկացած միջամտություն պետք է նաև բավարարի համաչափության պահանջը (տե՛ս, *Brumărescu v. Romania* [GC], թիվ 28342/95, կետ 78, ECHR 1999-VII):

95. Սույն գործով Դատարանը նշում է, որ Կառավարությունը կրկնել է իր փաստարկներն այն մասին, որ Սիացյալ Նահանգների խաղաղության կորպուսի ենթադրյալ դիվանագիտական ինուևիտետը հիմնավորում է շենքը դիմողին վերադարձնելու մերժումը:

96. Ինչ վերաբերում է նախքան 2002 թվականի մարտի 31-ը՝ վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալն ընկած ժամանակահատվածին, ապա Դատարանը կրկնում է 1999 թվականի հունիսի 24-ի վճռի չկատարման հետ կապված իր դատողությունները, մասնավորապես այն, որ վարձակալության պայմանագրի առկայությունը կարող է հիմնավորել շենքը դիմողին հասանելի դարձնելու հետ կապված ձգձգումները: Սակայն այն արձանագրում է, որ վարձավճարը շարունակել է գանձվել տեղական իշխանությունների և ոչ թե դիմողի՝ գույքի իրական սեփականատիրոջ կողմից, չնայած որ այն 1999 թվականի հունիսի 24-ի վճռի ուժով դադարել է պետական գույք լինելուց:

97. Ինչ վերաբերում է վարձակալության պայմանագրի դադարումից հետո ընկած ժամանակահատվածին, ապա Դատարանը նշում է, որ Պետությունն օգտագործել է և շարունակել է օգտագործել դիմողի գույքը, չնայած որ դրա նկատմամբ սեփականության իրավունք չի ունեցել: Կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի և 2005 թվականի հունվարի 21-ի համապատասխանաբար թիվ 533 և 60 որոշումները չեն տրամադրել օրինական սեփականության իրավունք, քանի որ դրանցում հաշվի չի առնվել 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճիռը:

98. Այս հիմքով և սույն գործի առանձնահատուկ հանգամանքները հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ պետական մարմինների ինուևիտետի սկզբունքն ինքնին բավարար չէ Դիմողի իշխանությունների կողմից շենքի նկատմամբ սեփականության իրավունքը դիմողին չփոխանցելը հիմնավորելու համար (հակառակ ենթադրության մասին տե՛ս, *Manoilescu and Dobrescu*, cited above):

99. Դատարանը նշում է, որ արդյունքում դիմողը, առանց փոխհատուցում ստանալու, մի քանի տարի շարունակ զրկված է եղել իր գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի բոլոր տարրերից, և որ գույքը վերադարձնելուն ուղղված նրա բոլոր ջանքերը մինչ այսօր հաջողությամբ չեն ավարտվել: Հետևաբար, անգամ ընդունելով, որ կարող է ցույց տրվել, որ իշխանությունների կողմից շենքը վերադարձնելու մերժումն ունեցել է իրավական հիմք և կատարվել է հասարակական շահից ելնելով, Դատարանն այն կարծիքի է, որ հանրային ընդհանուր շահի պահանջների և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև արդարացի հավասարակշռության պահանջը խախտվել է, և որ դիմողը կրել է և շարունակում է կրել անձնական և անհամաչափ ծանրություն:

100. Հետևաբար, առկա է եղել և շարունակում է առկա լինել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

III. ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

101. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա դիմողը փաստարկել է զենքերի հավասարության սկզբունքի խախտման մասին՝ կապված վերաքննիչ դատարանի կողմից 2002 թվականի փետրվարի 26-ին նշանակված նիստի հետաձգումը մերժելու հետ:

102. Ապա նա փաստարկել է, որ իր հրեական ծագման պատճառով, ի հակառակն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի, խտրական վերաբերմունքի է ենթարկվել:

103. Ելնելով իր տրամադրության տակ առկա ամբողջ տեղեկությունից, ինչպես նաև քննարկվող փաստարկների վերաբերյալ դատողություններ անելու իրավասությունից՝ Դատարանը չի գտնում, որ առկա են Կոնվենցիայով կամ դրա Արձանագրությամբ

յուններով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտում: Այս կապակցությամբ այն առաջին հերթին գտնում է, որ դիմողն օրենքով սահմանված կարգով ծանուցվել է դատարան ներկայանալու մասին և նախապես տեղյակ է եղել նիստի օրվա մասին, ինչպես նաև Վերաքննիչ դատարանը երկու անգամ հետաձգել է վճռի կայացումը՝ նրան գրավոր փաստարկներ ներկայացնելու հնարավորություն տալու համար: Երկրորդ՝ դիմողը խտրականության որևէ փաստ հիմնավորելու նպատակով ապացույց չի ներկայացրել:

104. Հետևաբար, դիմումի այս հատվածն ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի հիման վրա:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

105. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Նյութական վնասը

106. Դիմողը փաստարկել է, որ պատճառված վնասի փոխհատուցմանն ուղղված Կառավարության ամենապատշաճ միջոցը կլինի ամբողջ գույքը, այն է՝ շենքը և հողատարածքը, իրեն վերադարձնելը:

107. Եթե Կառավարությունը հրաժարվի ռեստիտուցիայից, դիմողը պատրաստ է 3.000.000 եվրոյի (EUR) չափով փոխհատուցում պահանջել, որը, նրա պնդմամբ, հավասարաթեք է գույքի շուկայական արժեքին: Ի հիմնավորումն իր պահանջի՝ նա վկայակոչել է փորձագետի եզրակացությունը, որը կազմվել է Տեխնիկական փորձագետների ռումինական ասոցիացիայի անդամի կողմից, ով գույքը գնահատել է 2.438.240 եվրոյի չափով:

108. Կառավարությունը չի համաձայնել պահանջվող գումարին: Այն վկայակոչել է այլ փորձագետի եզրակացություն, որը կազմվել էր լիազորագրված փորձագետի կողմից, որի համաձայն՝ գույքի շուկայական արժեքը 1.329.982 եվրո է: Կառավարությունը նաև նշել է, որ Պետությունը բարեկարգումների համար 66.294 եվրո է ներդրել, ինչի արդյունքում բարձրացել է գույքի արժեքը:

109. Պատասխանելիս արված իր դատողություններով դիմողը վիճարկել է Կառավարության կողմից ներկայացված փորձագետի եզրակացությունում առկա դատողությունները: Երկու փորձագետների կողմից առաջարկված գումարների միջև առկա տարբերությունն առաջացել է մասնավորապես այն պատճառով, որ Կառավարության կողմից նշանակված փորձագետը գույքի արժեքը հաշվել է՝ հիմք ընդունելով այն, որ դա գտնվում է Բուխարեստի «1-ին գոտում», մինչդեռ իրականում այն «0 գոտում» է, որտեղ գույքի արժեքն ավելի բարձր է:

110. Դիմողը նաև պահանջել է 288.000 եվրո որպես Պետության կողմից մինչև 2000 թվականի նոյեմբերը վարձավճարի գանձման հետևանքով բաց թողնված օգուտների փոխհատուցում:

111. Ի վերջո, նա պահանջել է 2.000 եվրո՝ որպես մինչև 2000 թվականը գույքի համար վճարված հարկերի և կատարված պարտականությունների փոխհատուցում:

112. *Inter alia*, հիմնվելով *Popescu Nasta v. Romania* (թիվ 33355/96, կետ 62, 2003 թվականի հունվարի 7) վճռի վրա՝ Կառավարությունը կարծիք է հայտնել, որ եթե Դատարանը պետք է կարգադրի գույքը դիմողին վերադարձնել, ապա այն չպետք է բաց թողնված օգուտների փոխհատուցում սահմանի:

113. Դատարանը կրկնում է, որ վճիռը, որում այն խախտում է արձանագրել, պատասխանող Պետության վրա Կոնվենցիայի իմաստով իրավական պարտականութ-

յուն է դնում դադարեցնել խախտումը և վերացնել դրա հետևանքները: Եթե ազգային օրենսդրությունը թույլատրում է միայն մասնակի վերացում, ապա Կոնվենցիայի 41-րդ հոդվածը Դատարանին իրավունք է տալիս Կոնվենցիայի խախտումն արձանագրելուն հանգեցրած գործողության կամ անգործության արդյունքում տուժած կողմին փոխհատուցում տրամադրել:

114. Սույն գործով Դատարանը գտնում է, որ վիճարկվող գույքը դիմողի տիրապետմանը հանձնելը, ինչպես դա կարգադրվել էր Բուխարեստի շրջանային դատարանի 1999 թվականի հունիսի 24-ի վճռով, դիմողին կոնի այնպիսի վիճակում, որը հնարավորինս հավասար կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման բացակայության դեպքում առկա իրավիճակներից մեկին:

115. Դատարանը որոշում է, որ եթե Պատասխանող պետությունը սույն վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում գույքը չվերադարձնի, այն պետք է դիմողին՝ որպես պատճառված նյութական վնասի փոխհատուցում, վճարի գույքի ընթացիկ արժեքի չափով գումար:

116. Անդրադառնալով այդ գումարի չափի որոշմանը՝ Դատարանն արձանագրում է կողմերի փորձագետների կողմից առաջարկված գների միջև առկա էական տարբերությունը:

117. Ելնելով Բուխարեստում անշարժ գույքի արժեքի վերաբերյալ ունեցած տեղեկությունից՝ Դատարանը շենքի և հարակից հողատարածքի շուկայական արժեքը գնահատում է 1.900.000 եվրո:

118. Ինչ վերաբերում է բաց թողնված օգուտների փոխհատուցման համար պահանջված գումարին, ապա Դատարանը գտնում է, որ վերոնշյալ վերջնական վճռի չկատարման արդյունքում դիմողին նյութական վնաս է պատճառվել, նա զրկվել է իր գույքն ազատորեն տնօրինելու և այն օգտագործելու կամ դրանից որևէ կերպ օգուտ ստանալու հնարավորությունից, քանի որ Պետությունը շարունակել է գանձել Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի կողմից վճարվող վարձավճարը: Հետևաբար, Դատարանը ողջամիտ է համարում, ինչպես առաջարկվել էր դիմողի կողմից, գնահատել 1999 թվականի հունիսի 24-ի վճռի չկատարման հետևանքով նրա կրած վնասները՝ հիմք ընդունելով կազմակերպության կողմից յուրաքանչյուր ամիս վճարված վարձավճարի չափը: Քանի որ Կառավարությունը չի վիճարկել այն հանգամանքը, որ Պետությունը շարունակել է գանձել 1999 թվականի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարը, Դատարանը սա կդիտի որպես ելակետ:

119. Սակայն իրական գնահատում իրականացնելու նպատակով Դատարանը պետք է հաշվի առնի նաև այն փաստը, որ դիմողը պետք է որոշակի գումար ներդնի շենքի պահպանման համար և որ վարձավճարը հարկվելու է (տե՛ս, *mutatis mutandis*, *Prodan v. Moldova*, թիվ 49806/99, կետ 74, ECHR 2004-III (քաղվածքներ)):

120. Վերոգրյալի հիման վրա և հավասար հիմքերով որոշում կայացնելով՝ Դատարանը որոշեց դիմողին տրամադրել 200.000 եվրո՝ որպես 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճռի չկատարման հետևանքով բաց թողնված օգուտի փոխհատուցում:

121. Վերջապես, ինչ վերաբերում է մինչև 2000 թվականը վճարված հարկերի և կատարված պարտականությունների փոխհատուցմանը, ապա Դատարանը նշում է, որ դիմողը կատարել է իր՝ որպես գույքի սեփականատիրոջ պարտականությունները և գույքի նկատմամբ նրա սեփականության իրավունքը դեռևս վավեր է: Հետևաբար, այն գտնում է, որ իր կողմից արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումները չեն հիմնավորում քննարկվող գումարի փոխհատուցումը: Այն փաստը, որ Գործակալությունը ևս վճարել է այդ հարկերը և կատարել է գույքի հետ կապված պարտականությունները՝ չեն փոխում այս եզրակացությունը:

B. Ոչ նյութական վնասը

122. Դիմողը պահանջել է 300.000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, որը նա ենթադրաբար կրել էր իշխանությունների կողմից գույքն իրեն վերադարձնելուց հրաժարվելու հետևանքով: Հրաժարումը նրան էական հոգեկան տառապանք է պատճառել, որը հանգեցրել է նրա առողջական վիճակի վատթարացման և սրտի նոպայի:

123. Կառավարությունը վիճարկել է այս պահանջը՝ կարծիք հայտնելով, որ առկա չէ ուղղակի կապ խախտումների և փաստարկված ոչ նյութական վնասների միջև: Ապա այն նշել է, որ Դատարանի կողմից խախտման արձանագրումը ինքնին բավարար փոխհատուցում է հանդիսանում:

124. Դատարանը չի կարող անտեսել իր գույքի նկատմամբ տիրապետումը վերականգնելուն ուղղված՝ տարեց դիմողի բազմաթիվ փորձերը կամ այն հոգեկան տառապանքները, որ նա պետք է որ ունեցած լիներ 1999 թվականի հունիսի 24-ի վերջնական վճռի կատարումն ապահովելու անկարողության հետևանքով: Այն գտնում է, որ քննարկվող հանգամանքները հանդիսանում են դիմողի՝ գույքից անարգել օգտվելու, դատարան դիմելու և արդար դատաքննության իրավունքների լուրջ խախտման արդյունք, որի համար 10.000 եվրոյի չափով գումարը հանդիսանում է ոչ նյութական վնասի արդարացի փոխհատուցում:

C. Ծախսերը և ծախքերը

125. Դիմողը նաև պահանջել է 10.000 եվրո՝ որպես ներպետական դատարաններում և Դատարանում կատարված ծախսերի և ծախքերի փոխհատուցում:

126. Կառավարությունը նշել է, որ դիմողն ի հիմնավորումն իր պահանջի՝ չի ներկայացրել որևէ փաստաթղթային ապացույց, և քանի որ ծախսերը և ծախքերը կապված են ներպետական դատարանների հետ, նա կարող է փոխհատուցման պահանջով դատարան դիմել:

127. Դատարանը կրկնում է, որ ծախսերը Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցման ենթակա գումարներում ներառելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ դրանց կատարումն իրական և անխուսափելի, ինչպես նաև չափի առումով ողջամիտ է եղել (ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, տե՛ս, *Nikolova v. Bulgaria* [GC], թիվ 31195/96, կետ 79, ECHR 1999-II):

128. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը չի մանրամասնել իր պահանջը կամ չի ներկայացրել որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում պահանջվող գումարի չափը հիմնավորող փաստաթղթային ապացույցներ, Դատարանը որոշում է այս կետով նրան փոխհատուցում չտրամադրել:

D. Տուգանային տոկոսները

129. Դատարանը նպատակահարմար է գտնում, որպեսզի տուգանային տոկոսը զանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքի հիման վրա՝ հավելված երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Հայտարարում է գանգատն ընդունելի՝ կապված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որը վերաբերում է 1999 թվականի հունիսի 24-ի վճռի չկատարմանը և Բուխարեստի վերաքննիչ դատարանի անկախությանն ու անաչառությանը, ինչպես նաև կապված թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

2. Վճռում է, որ 1999 թվականի հունիսի 24-ի վճռի չկատարման արդյունքում տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում.

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, քանի որ դիմողին չի տրամադրվել անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի քննություն.

4. Վճռում է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

5. Վճռում է,

(a) որ պատասխանող պետությունը պետք է սույն վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ուժի մեջ մտնելուց հետո Բուխարեստի շրջանային դատարանի 1999 թվականի հունիսի 24-ի վճռին համաձայն՝ երեք ամսվա ընթացքում դիմողին վերադարձնի Բուխարեստի Նեգուստորի 16 փողոցում գտնվող շենքը.

(b) որ նման ռեստիտուցիա չիրականացնելու դեպքում պատասխանող պետությունը դիմողին նույն եռամսյա ժամկետում պետք է վճարի 1.900.000 (մեկ միլիոն ինը հարյուր հազար) եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում.

(c) որ անկախ ամեն ինչից, պատասխանող պետությունը պետք է դիմողին վճարի 200.000 (երկու հարյուր հազար) եվրո՝ որպես նյութական վնասի և 10.000 (տասը հազար) եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում.

(d) որ քննարկվող գումարները պետք է տրամադրվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրը գործող փոխարժեքով, գումարած ցանկացած հարկ, որը կարող է գանձվել ոչ նյութական վնասի կապակցությամբ.

(e) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետը լրանալուց հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույթին՝ հավելած երեք տոկոս.

6. Մերժում է արդարացի բավարարման հետ կապված դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարվել է ֆրանսերենով և Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ - մասերի համաձայն՝ գրավոր հրապարակվել է 2007 թվականի հուլիսի 26-ին:

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ մասի և Դատարանի կանոնների 74-րդ կանոնի 2-րդ մասի հիման վրա դատավոր Քաֆլիշի հատուկ կարծիքը, որին միացել է դատավոր Ջիեմելը, կցվում է սույն վճռին: